50531/40/18

Հավելված թիվ 3
Ծառայությունների կատարման մասին «09» «10» 2024թ.
կնքված թիվ 24-0121Պ պայմանագրի

**ԿԱՏԱՐՈՂ**
«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ
ՀՀ, ք. Երևան, Իսակովի 24, հեռ.՝ (374-10) 77-77-10
ՀՀ ՖՆ գանձապետարան, Երևանի թիվ 1 ՏԳԲ
ՀՀ՝ 900018005588
ՀՎՀՀ՝ 01836525

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ՆԳՆ հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչություն
ՀՀ, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 9, հեռ.՝ 011-56-12-51
ՀՀ՝ 900011049252
ՀՎՀՀ՝ 01840082

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**
**ՀԱՆՁՆՄԱՆ - ԸՆԴՈՒՆՄԱՆ**

**11.10.2024թ.** **ք. Երևան**

Պատվիրատուն՝ ՀՀ ՆԳՆ հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչության պետ Ա.Թևոսյանի և Կատարողը՝ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ն, ի դեմս՝ տնօրեն Ա.Հովսեփյանի (փորձաքննությունը կատարող՝ նյութագիտական փորձաքննությունների բաժնի փորձագետ Մ.Ասլիկյան և հետքաբանական փորձաքննությունների բաժնի փորձագետ Է.Մովսիսյան), հիմք ընդունելով 09.10.2024թ.-ին ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար Ա.Ֆիդանյանի հետ կնքված №24-0121Պ պայմանագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին՝

պայմանագրի շրջանակներում կատարողը 09.10.2024թ.-ից մինչև 11.10.2024թ.-ն ընկած ժամանակահատվածում կատարել է հետևյալ աշխատանքները (ծառայության մատուցումը).

| **Կատարված աշխատանքների (մատուցված ծառայության) համառոտ նկարագիրը** *(անվանումն ըստ փորձաքննության /հետազոտության/ յուրաքանչյուր տեսակի /կոդի/ և ենթատեսակի /կոդի/)* | **Կատարված (մատուցված ծառայության ծավալում ներառված) աշխատանքների յուրաքանչյուր տեսակի ենթատեսակի քանակական ցուցանիշը** *(միավորների քանակը)* | **Կատարված (մատուցված ծառայության ծավալում ներառված) աշխատանքների ըստ դասակարգման 1 միավորի գինը** *(ՀՀ դրամ, ներառյալ օրենսդրությամբ սահմանված ԱԱՀ)* | **Աշխատանքների կատարման (ծառայության մատուցման) ժամկետը** | **Վճարման ենթակա գումարը** *(ՀՀ դրամ, ներառյալ օրենսդրությամբ սահմանված ԱԱՀ)* | **Պայմանագրի համարը** |
|---|---|---|---|---|---|
| 09 – նյութագիտական փորձաքննություն /09-08/ | 3 | 72 000 | 09.10.2024թ.- 11.10.2024թ. | 216 000 | №24-0121Պ |
| 06 – հետքաբանական փորձաքննություն /06-02/ | 3 | 45 000 | | 135 000 | |
| Ընդամենը | | | | 351 000 | |

Վերոնշյալ աշխատանքների կատարման (ծառայության մատուցման) վերաբերյալ հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

**Աշխատանքը (ծառայությունը) հանձնեց**

Տնօրեն՝ _______________ Ա.Հովսեփյանը

**Աշխատանքն (ծառայությունն) ընդունեց**

Պատվիրատու՝ _______________ Ա.Թևոսյանը

Կատ.՝
տնօրենի տեղակալ փորձաքննությունների գծով Ա.Գահնապետյան
Նյութագիտական փորձաքննությունների բաժնի պետ Ա.Թովմասյան
Հետքաբանական փորձաքննությունների բաժնի փորձագետ Է.Մովսիսյան
հեռ. 77-77-10 (+115)

Հավելված թիվ 3.1
Ծառայությունների կատարման մասին «09» «10» 2024թ.-ին
կնքված թիվ 24-0121Պ պայմանագրի

**ԱԿՏ N 1**
**ծառայությունը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ**

Սույնով արձանագրվում է, որ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Վաճառող) Ներքին գործերի նախարարությանը (այսուհետ՝ Գնորդ) 2024թ.-ի հոկտեմբերի 11-ին հանձնման-ընդունման նպատակով հանձնեց ստորև նշված ծառայությունը (թիվ 24-0121Պ եզրակացություն).

| Ծառայության | | | | |
|---|---|---|---|---|
| Անվանումը | Տեխնիկական բնութագիրը | Ըստ պայմանագրի հաստատված գնման ժամանակացույցի | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| Նյութագիտական փորձաքննություն (09-08) | ըստ պայմանագրի | հոկտեմբերի | հատ | 3 |
| Հետքաբանական փորձաքննություն (06-02) | ըստ պայմանագրի | հոկտեմբերի | հատ | 3 |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

**ԿՈՂՄԵՐԸ**

**Հանձնեց**

անուն, ազգանուն

ստորագրություն

**Ընդունեց**

անուն, ազգանուն

ստորագրություն

## Հարկային հաշիվ

(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 11 | Հոկտեմբեր | 2024 թ. |
| **[4] Մատակարարման ամսաթիվ** | | |
| 11 | Հոկտեմբեր | 2024 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| A | 0396505291 |
| **Ճշգրտվող հաշվի** | |
| Սերիա | Համար |
| | |
| **Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ** | |
| | |

| | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| **Պայմանագիր** | 9 Հոկտեմբեր, 2024 թ. | 24-0121Պ |

**[7] Լրացուցիչ տվյալներ**

Համաձայն պայմանագրի

**[7.1] ՀԴՄ կտրոնի համար**

### Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի տվյալներ

| | |
|---|---|
| **[8] Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)** | 0 1 8 3 6 5 2 5 |
| **[9] Անվանում** | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) |
| **[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համար** | 0 1 8 3 6 5 2 5 / 1 |
| **[11] Բանկի անվանում** | Երևանի թիվ 1 ՏԳԲ — Հաշվեհամար 900018005588 |
| **[12] Գտնվելու վայր (հասցե)** | ԵՐԵՎԱՆ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ԹԱՂԱՄԱՍ ԻՍԱԿՈՎԻ 24 |
| **[13] Լրացուցիչ տվյալներ** | |

### Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի տվյալներ

| | |
|---|---|
| **[14] Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) (անձը հաստատող փաստաթուղթ, սերիա և/կամ համար, ՀԾՀ)** | 0 1 8 4 0 0 8 2 |
| **[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համար** | |
| **[16] Անվանում** | ՀՀ ՈՍՏ.ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹ.ԾԱՌԱՅ. Պետական կառավարչական հիմնարկ |
| **[17] Բանկի անվանում** | Հաշվեհամար |
| **[18] Գտնվելու վայր (հասցե)** | ԵՐԵՎԱՆ ՇԵՆԳԱՎԻԹ ՇԵՆԳԱՎԻԹ ԹԱՂԱՄԱՍ Իսակովի 9 |
| **[19] Լրացուցիչ տվյալներ** | |

| | | | |
|---|---|---|---|
| **[20] Ում միջոցով** | **Անուն, ազգանուն** | | |
| | **Լիազորագիր** | **Համար** | |
| | | **Ամսաթիվ** | |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկ

| N | Ծառայության (աշխատանքի) անվանում (բովանդակություն) | Չափման միավոր | Ընդհանուր ծավալ (ժամանակ աշխատանք) | Միավորի գին | Զեղչ (%) | Արժեք | ԱԱՀ դրույքաչափ (%) | ԱԱՀ գումար | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | 09. Նյութագիտական փորձաքննություն 09-08 | հատ | 3 | 60000 | | 180000 | 20 | 36000 | 216000 |
| 2 | 06. Հետքաբանական փորձաքննություն 06-02 | հատ | 3 | 37500 | | 112500 | 20 | 22500 | 135000 |
| **Ընդամենը** | | | | | | **292500** | **X** | **58500** | **351000** |

**Առաքող՝** **BAGHDASARYAN NAREK 2203930810**

ստորագրությունը ( անունը, ազգանունը)

11/10/2024 16:01:17

**Ստացող՝**

ստորագրությունը ( անունը, ազգանունը)

ՀՀ ԳԱԱ «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» ՊՈԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ»

ՊՈԱԿ

0004, ք. Երևան, Ծովակալ Իսակովի պող. 24 — Հեռ. 77-77-10 (օպերատոր) 77-77-10 (+115)

# ՓՈՐՁԱԳԵՏԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**Թիվ 24-0121Պ**

Ըստ՝ ՀՀ ՆԳՆ հաշվառման-քննական ծառայությունների մատուցման, թույլտվությունների և լիցենզավորման վարչության պետ Ա.Թևոսանի 09.10.2024թ.-ի № 7/8 գրության:

Փորձաքննության տեսակը՝ նյութագիտական և հետքաբանական համալիր:

Փորձաքննության հիմքը՝ ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար Ա.Ֆիդանյանի հետ 2024թ. հոկտեմբերի «09»-ին կնքված N24-0121Պ պայմանագիրը նյութագիտական և հետքաբանական համալիր փորձաքննություն /հետազոտություն/ կատարելու մասին:

Փորձաքննությունը սկսվել է 2024թ.-ի հոկտեմբերի «09»-ին:

Փորձաքննությունն ավարտվել է 2024թ.-ի հոկտեմբերի «11»-ին:

## Տեղեկություններ փորձաքննությունը կատարող փորձագետի մասին

***Մուշեղ Արտուրի Ասլիկյան*** – ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի նյութագիտական փորձաքննությունների բաժնի փորձագետ՝ բարձրագույն կրթությամբ (ֆիզիկա), դատանյութագիտական և գործիքային մեթոդներով փորձաքննություններ կատարելու իրավասությամբ: Դատափորձագիտական աշխատանքի ստաժը՝ 9 տարի:

***Էրիկ Սերգեյի Մովսեսյան*** - ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի հետքաբանական փորձաքննությունների բաժնի փորձագետ, բարձրագույն տեխնիկական կրթությամբ, դատահետքաբանական փորձաքննություններ կատարելու իրավասությամբ, աշխատանքային մասնագիտական ստաժը՝ 4 տարի:

## Փորձագետին պարզաբանման համար առաջադրված հարցերը

1. Խնդրում եմ իրականացնել տրամադրվող ներկող ժապավենի (Zebra: 800012-445), թափանցիկ պաշտպանիչ թաղանթի (Zebra: 800012-601), թափանցիկ պաշտպանիչ թաղանթի (Zebra: 800084-913) ներկայացվող մեկական նմուշների

փորձաքննություն՝ պարզելու համար, թե դրանք ըստ նյութի տեսակի, գործարանային փաթեթավորման, ապրանքի չօգտագործված լինելու հատկանիշների համապատասխանում են տրամադրված տեխնիկական բնութագրերին, թե ոչ:

**<u>Օգտագործված մեթոդական և մասնագիտական գրականություն</u>**


1. ИК спектры основных классов органических соединений. Тарасевич Б.Н. Москва 2012.
2. ИНФРАКРАСНАЯ СПЕКТРОСКОПИЯ. И.В. Колесник, Н.А. Саполетова. Москва 2011.
3. «Механизм образования общих признаков следов инструментов и их использование в отождествлении» Киев 1967 г.
4. Н. П. Майлис "Судебная трасология", издательство "Экзамен", Москва 2003г.


## <u>ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ</u>

### *<u>Արտաքին զննություն</u>*

Փորձաքննության են ներկայացվել թվով 3 տուփեր, որոնց մեջ առկա էին մեկական թաղանթի փաթույթներ՝

- «Zebra: 800012-445» գրառումներ կրող – օբյեկտ 1,
- «Zebra: 800012-601» գրառումներ կրող – օբյեկտ 2,
- «Zebra: 800084-913» գրառումներ կրող – օբյեկտ 3:

Մանրամասն նկարագրությունը տե՛ս հետքաբանական հետազոտական մասում:

Օբյեկտների համարակալումը պայմանական է և կատարվել է մեր կողմից:

### *<u>Նյութագիտական մաս</u>*

*/կատարող փորձագետ՝ Մ.Ասլիկյան/*

Փորձաքննության ներկայացված օբյեկտներ 1-3-ի բաղադրությունը պարզելու նպատակով, դրանք հետազոտվեցին ինֆրակարմիր (ԻԿ) սպեկտրոսկոպիայի եղանակով՝ «IR Prestige-21 FTIR» մոդելի սպեկտրոֆոտոմետրով՝ ATR համակարգով (համաձայն հաստատված ՓԱԲ-03/4-Ք/Ը-004 ընթացակարգի): Փորձանմուշների տատանողական սպեկտրերը գրանցվեցին լույսի 4000-650 սմ$^{-1}$ ալիքային մարզում: Ստացված կլանումների դիագրամային պատկերները համադրվեցին սպեկտրոֆոտոմետրի տվյալների էլեկտրոնային բազայում առկա նյութերի դիագրամային պատկերների հետ: Արդյունքում պարզվեց, որ հետազոտելի՝

- օբյեկտներ 1-ի և 2-ի տատանողական սպեկտրերն իրենց կլանման պիկերով համապատասխանում են սպեկտրոֆոտոմետրի տվյալների էլեկտրոնային բազայում առկա պոլիէթիլենի տատանողական սպեկտրի հետ,
- օբյեկտ 3-ի տատանողական սպեկտրն իր կլանման պիկերով համապատասխանում է սպեկտրոֆոտոմետրի տվյալների էլեկտրոնային բազայում առկա պոլիպրոպիլենի տատանողական սպեկտրի հետ:

ԻԿ հետազոտությունների արդյունքները պահվում են սարքի էլեկտրոնային պահոցում:

***Փորձագետ՝*** ***Մ.Ասլիկյան***

ՍՊԸ «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՐՈ» ՓԲԸ

## *Հետքաբանական մաս*

*/կատարող փորձագետ՝ Է.Մովսեսյան/*

Փորձաքննության են ներկայացվել թվով 3 հատ քառանկյունաձև տեսքի տուփեր (լուս.№1), որոնց մակերեսներին առկա են **«COLOURS Retransfer Ribbon»**, **«COLOURS ZXP series 8»**, **«SECURE PREMIER LAMINATES»** գրառումները, որոնց հետազոտությամբ պարզվեց հետևյալը.

**«COLOURS Retransfer Ribbon»** գրառումները կրող թվով 1 տուփը կապտավուն երանգի է, 104x55x99մմ կողային չափերով, որը փաթեթավորված է անգույն, թափանցիկ պոլիէթիլենային թաղանթով: **«COLOURS Retransfer Ribbon»** գրառումներից բացի, տուփի վերևի բացվող հատվածի վրա առկա է պիտակ՝ **«true COLOURS CARD PRINTER Retransfer»**, **«ZEBRA 8000-445»** և այլ գրառումներով: Նշված տուփի արտաքին թափանցիկ պոլիէթիլենային թաղանթն հետազոտելով դիտարկման մեթոդով, ինչպես անզեն աչքով, այնպես էլ «MOTIC» տեսակի մանրադիտակի տեսադաշտում (խոշորացումը 16x, 32x) պարզվեց, որ փաթեթավորման թաղանթի եզրային հատվածները միմյանց ամրացված են ջերմային ներգործության միջոցով, որը տեղ-տեղ ուղղեկցվում է հավաքված՝ ճմռթված տեսքերով (լուս.№2-8): Նշված տուփի պոլիէթիլենային թաղանթով փաթեթավորման եզրային հատվածներում արտահայտված հատկանիշները հիմք են տալիս եզրակացնել, որ այն բնորոշ է և փաթեթավորված է մեխանիզացված սարքավորումների միջոցով: Նշված տուփի թաղանթը՝ վերևի հատվածից կտրվեց, այնուհետև բացվեց տուփը և ուսումնասիրվեց դրա միջի պարունակությունը: Պարզվեց, որ տուփում առկա են թվով 2 հատ՝ գլանաձև կապտավուն և մանուշակագույն երանգների դետալներ (լուս.№9-15), որոնցից մանուշակագույն երանգի գլանաձև տեսքի դետալի վրա փաթաթված է թափանցիկ ժապավեն, որի ազատ եզրը փակցված է կապտավուն երանգի գլանաձև տեսքի դետալի վրա: Նշված դետալների և տուփի դիտարկման մեթոդով, ինչպես անզեն աչքով, այնպես էլ «MOTIC» տեսակի մանրադիտակի տեսադաշտում (խոշորացումը 16x32x) հետազոտության արդյունքում դրանց մակերեսներին, ինչպես մեխանիկական բնույթի, այնպես էլ շահագործման բնույթի վնասվածներ և հետքեր չհայտնաբերվեցին, որպիսի հանգամանքը հիմք է տալիս եզրակացնել, որ հետազոտվող տուփը և դրա մեջ առկա դետալները պատրաստված են գործարանային եղանակով և օգտագործված չեն:

**«COLOURS ZXP series 8»** գրառումները կրող թվով 1 տուփը կապտավուն երանգի է, 104x55x99մմ կողային չափերով, որը փաթեթավորված է անգույն, թափանցիկ պոլիէթիլենային թաղանթով: **«COLOURS ZXP series 8»** գրառումներից բացի, տուփի վերևի բացվող հատվածի վրա առկա է պիտակ՝ **«true COLOURS TRANSFER FILM ZXP series 8»**, **«ZEBRA 800012-601»** և այլ գրառումներով: Նշված տուփի արտաքին թափանցիկ պոլիէթիլենային թաղանթն հետազոտելով դիտարկման մեթոդով, ինչպես անզեն աչքով, այնպես էլ «MOTIC» տեսակի մանրադիտակի տեսադաշտում (խոշորացումը 16x, 32x) պարզվեց, որ փաթեթավորման թաղանթի եզրային հատվածները միմյանց ամրացված են ջերմային ներգործության միջոցով, որը տեղ-տեղ

ուղղեկցվում է հավաքված՝ ճմռթված տեսքերով (լուս.№16-22)։ Նշված տուփի պոլիէթիլենային թաղանթով փաթեթավորման եզրային հատվածներում արտահայտված հատկանիշները հիմք են տալիս եզրակացնել, որ այն բնորոշ է և փաթեթավորված է մեխանիզացված սարքավորումների միջոցով։ Նշված տուփի թաղանթը՝ վերևի հատվածից կտրվեց, այնուհետև բացվեց տուփը և ուսումնասիրվեց դրա միջի պարունակությունը։ Պարզվեց, որ տուփում առկա են թվով 2 հատ՝ գլանաձև կապտավուն և մանուշակագույն երանգների դետալներ (լուս.№23-28), որոնցից մանուշակագույն երանգի գլանաձև տեսքի դետալի վրա փաթաթված է թափանցիկ ժապավեն, որի ազատ եզրը փակցված է կապտավուն երանգի գլանաձև տեսքի դետալի վրա։ Նշված դետալների և տուփի դիտարկման մեթոդով, ինչպես անզեն աչքով, այնպես էլ «MOTIC» տեսակի մանրադիտակի տեսադաշտում (խոշորացումը 16x, 32x) հետազոտության արդյունքում դրանց մակերեսներին, ինչպես մեխանիկական բնույթի, այնպես էլ շահագործական բնույթի վնասվածներ և հետքեր չհայտնաբերվեցին, որպիսի հանգամանքը հիմք է տալիս եզրակացնել, որ հետազոտվող տուփը և դրա մեջ առկա դետալները պատրաստված են գործարանային եղանակով և օգտագործված չեն։

**«SECURE PREMIER LAMINATES»** գրառումները կրող թվով 1 տուփը ծիրանագույն երանգի է, 70x67x71մմ կողային չափերով, որը փաթեթավորված է անգույն, թափանցիկ պոլիէթիլենային թաղանթով։ **«SECURE PREMIER LAMINATES»** գրառումներից բացի, տուփի վերևի բացվող հատվածի վրա առկա է պիտակ՝ **«true SECURE PREMIER LAMINATES», «ZEBRA 800084-913»** և այլ գրառումներով։ Նշված տուփի արտաքին թափանցիկ պոլիէթիլենային թաղանթն հետազոտելով դիտարկման մեթոդով, ինչպես անզեն աչքով, այնպես էլ «MOTIC» տեսակի մանրադիտակի տեսադաշտում (խոշորացումը 16x, 32x) պարզվեց, որ փաթեթավորման թաղանթի եզրային հատվածները միմյանց ամրացված են ջերմային ներգործության միջոցով, որը տեղ-տեղ ուղղեկցվում է հավաքված՝ ճմռթված տեսքերով (լուս.№29-34)։ Նշված տուփի պոլիէթիլենային թաղանթով փաթեթավորման եզրային հատվածներում արտահայտված հատկանիշները հիմք են տալիս եզրակացնել, որ այն բնորոշ է և փաթեթավորված է մեխանիզացված սարքավորումների միջոցով։ Նշված տուփի թաղանթը՝ վերևի հատվածից կտրվեց, այնուհետև բացվեց տուփը և ուսումնասիրվեց դրա միջի պարունակությունը։ Պարզվեց, որ տուփում առկա է թվով 1 հատ՝ ծիրանագույն երանգի և գլանաձև տեսքի դետալ (լուս.№35-43), որի վրա փաթաթված է թափանցիկ ժապավեն։ Նշված դետալների և տուփի դիտարկման մեթոդով, ինչպես անզեն աչքով, այնպես էլ «MOTIC» տեսակի մանրադիտակի տեսադաշտում (խոշորացումը 16x32x) հետազոտության արդյունքում դրանց մակերեսներին, ինչպես մեխանիկական բնույթի, այնպես էլ շահագործական բնույթի վնասվածներ և հետքեր չհայտնաբերվեցին, որպիսի հանգամանքը հիմք է տալիս եզրակացնել, որ հետազոտվող տուփը և դրա մեջ առկա դետալները պատրաստված են գործարանային եղանակով և օգտագործված չեն։

Ելնելով փորձաքննությանը տրամադրված թվով 3 փաթեթների, դրանց մեջ առկա գլանաձև տեսքի դետալների և վերջինների վրա փաթաթված թափանցիկ

ժապավենների հետազոտությունների արդյունքերից՝ եզրակացնում եմ, որ փորձաքննությանը տրամադրված թվով 3 տուփերը պատրաստված և փաթեթավորված են գործարանային եղանակով, իսկ դրանց մեջ առկա գլանաձև տեսքի դետալները և դրանց վրա փաթաթված թափանցիկ ժապավեններն օգտագործված չեն, որոնք նշված հատկանիշներով համապատասխանում են դրանց տեխնիկական բնութագրերում առկա տվյալներին:

*Փորձագետ՝* *Է.Մովսեսյան*

## ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆ

**1ա.** Սույն փորձաքննության շրջանակներում կատարված հետազոտությունների արդյունքները հիմք են տալիս եզրակացնել, որ փորձաքննության ներկայացված՝

- «Zebra: 800012-445» տպատառ գրառումներ կրող թաղանթը (օբյեկտ 1) պատրաստված է պոլիէթիլենից,
- «Zebra: 800012-601» տպատառ գրառումներ կրող թաղանթը (օբյեկտ 2) պատրաստված է պոլիէթիլենից,
- «Zebra: 800012-913» տպատառ գրառումներ կրող թաղանթը (օբյեկտ 3) պատրաստված է պոլիպրոպիլենից,
- վերոնշյալ թվով երեք թաղանթներն իրենց նյութի տեսակով համապատասխանում են տրամադրված տեխնիկական բնութագրի պահանջներին:

*Փորձագետ՝* *Մ.Ասլիկյան*

**1բ.** Ընդհանրացնելով փորձաքննությանը տրամադրված թվով 3 փաթեթների, դրանց մեջ առկա գլանաձև տեսքի դետալների և վերջիններիի վրա փաթաթված թափանցիկ ժապավենների հետազոտությունների արդյունքները՝ եզրակացնում եմ, որ փորձաքննությանը տրամադրված թվով 3 տուփերը պատրաստված և փաթեթավորված են գործարանային եղանակով, իսկ դրանց մեջ առկա գլանաձև տեսքի դետալները և դրանց վրա փաթաթված թափանցիկ ժապավեններն օգտագործված չեն, որոնք նշված հատկանիշներով համապատասխանում են դրանց տեխնիկական բնութագրերում առկա տվյալներին (մանրամասն տես՝ հետազոտական հետքաբանական մասում):

*Փորձագետ՝* *Է.Մովսեսյան*

## ՀՀ ԳԱԱ «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» ՊՈԱԿ

2024թ. եզրակացություն №24-0121Պ

## ՀԵՏՔԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍԻ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ




Նկ.№1




Նկ.№2




Նկ.№3




Նկ.№4




Նկ.№5




Նկ.№6




Նկ.№7




Նկ.№8

ՀՀ ԳԱԱ «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» ՊՈԱԿ



Նկ.№9



Նկ.№10



Նկ.№11



Նկ.№12



Նկ.№13




Նկ.№14




Նկ.№15




Նկ.№16

ՀՀ ԳԱԱ «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» ՊՈԱԿ

| | |
|---|---|
| <br>Նկ.№17 | <br>Նկ.№18 |
| <br>Նկ.№19 | <br>Նկ.№20 |
| <br>Նկ.№21 | <br>Նկ.№22 |
| <br>Նկ.№23 | <br>Նկ.№24 |

ՀՀ ԳԱԱ «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» ՊՈԱԿ



Նկ.№25




Նկ.№26



Նկ.№27



Նկ.№28




Նկ.№29




Նկ.№30




Նկ.№31




Նկ.№32

ՀՀ ԳԱԱ «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» ՊՈԱԿ




Նկ.№33




Նկ.№34



Նկ.№35



Նկ.№36



Նկ.№37



Նկ.№38



Նկ.№39



Նկ.№40

| | |
|---|---|
| <br>Նկ.№41 | <br>Նկ.№42 |
| <br>Նկ.№43 | |

ՀՀ ԳԱԱ «ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ» ՊՈԱԿ

**Փորձագետ՝** **Է.Մովսեսյան**